ArmLur.am

I SSN 1829-2763
23055
9 771829 276006

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

14 ապրիլի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

55
(2721)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 175



Ապրիլի 12-ին ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր. «Մեզ մեղադրում են, որ մեր իշխանության օրոք հայ-ռուսական հարաբերությունները փչացել են, բայց ես ուզում եմ այդ մարդկանց հիշեցնել, որ հենց իրենց իշխանության օրոք է առաջին անգամ եղել, երբ ՌԴ-ն Ադրբեջանի հետ բազմամիլիարդանոց զենքի գործարք է կնքել»: Նրա խոսքով՝ ՌԴ-ն 2011-2012 թվականին առաջին անգամ բազմամիլիարդանոց զենքի վաճառքի գործարք կնքեց Արդբեջանի հետ, ընդ որում՝ միաժամանակ խստորեն սահմանափակեց զենքի մատակարարումները Հայաստան: «Ես դա իմացել եմ 2016-ին Սերժ Սարգսյանի կողմից գրված մի նամակից, որը, ի տարբերություն ուրիշ այլ փաստաթղթերի, արխիվում պահպանված է «հույժ գաղտնի» գրիֆի ներքո», - հավելել էր նա: Երեկ Սերժ Սարգսյանը հակադարձեց այս հայտարարություններին. «Դժվար է ինձ մեկնաբանել, որովհետեւ եթե Հայաստանի կառավարիչը ԱԺ ամբիոնից փորձում է խոսել իմ կողմից ստորագրված գաղտնի գրիֆով նամակի մասին, էլ ի՞նչ ասեմ: Ես միայն կարող եմ ասել, որ երբեք ես որեւէ փաստաթուղթ՝ լինի նամակ, լինի համաձայնագիր կամ որեւէ այլ փաստաթուղթ՝լինեն դրանք գաղտնի գրիֆով, թե սովորական, երբեք որեւէ բան չեմ ստորագրել, որի համար որեւէ հայ կարող է ամաչել: Թող անիամեստ չհնչի, բայց, ընդհակառակը, բոլոր փաստաթղթերը եթե հրապարակեն, մարդիկ կտեսնեն, թե ինչպես է պաշտպանվել հայկական պետությունների շահը: Ես պնդում եմ՝թող հրապարակի, այդտեղ որեւէ խնդիր չկա, ինքն իրավունք ունի, չունենա էլ, ինքն իրեն այնպիսի իրավունքներ է վերագրում, որ էս էլ կարող է վերագրել: Բայց վստահաբար այդ իրավունքն ունի, ինքը կարող է գաղտնազերծել եւ հրապարակել: Եթե չհրապարակի, ուրեմն ինքը ստախոս է, թեեւ այնպիսի մեղմ բառ ասացի, որպեսզի ձեզ չվիրավորեմ»: Այսինքն՝եթե ապացույցը չլինի, ապա Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է:






Խորհրդարանում երեկ սահմանային իրավիճակի շուրջ փակ քննարկում է տեղի ունեցել: «Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել այդ քննարկումից: Քննարկման հիմնական օրակարգում եղել է Տեղ գյուղի ապրիլի 11-ի սահմանային միջադեպը եւ դրա նախորդ օրը՝ ապրիլի 10-ին ադրբեջանցի զինծառայողների՝ ՀՀ տարածք ներթափանցումը: Տեղեկացանք, որ քննարկումը եղել է հարցուպատասխանի ֆորմատով. սկզբում հարցեր են ուղղել ընդդիմադիր պատգամավորները, այնուհետեւ՝ՔՊ-ական պատգամավորները: Հարցերը հիմնականում ուղղված են եղել ԳՇ պետ Էդվարդ Ասրյանին, վերջինս էլ, ինչպես մեզ հաջողվեց պարզել, հիմնականում խուսափողական պատասխաններ է տվել: Ինչ վերաբերում է Տեղ գյուղում հակառակորդի իրականացրած սադրանքին, ԳՇ պետն ընդունել է, որ դա հայկական կողմի բացթողման հետեւանքն է նաեւ:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանից հետո պետք է հրավիրվի ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը: Ինչպես հայտնի է, վերջինս գտնվում է ԱԱԾ մեկուսարանում: Այս պահին, մեր տեղեկություններով, հանձնաժողովի ներսում երկու տեսակետ կա. կամ պետք է իրենք թույլտվություն ստանան եւ գնան նրա մոտ, կամ պետք է ընթացակարգերով դիմում գրեն եւ այնպես անեն, որ Դավիթ Տոնոյանին կարողանան բերել ՀՀ Ազգային ժողով: Հավելենք, որ առաջիկայում այս հանդիպումների շարքը շարունակվելու է, եւ նոր հրավիրվողներ էլ կլինեն: Բանն այն է, որ քննիչ հանձնաժողովի գործունեությանը քիչ ժամանակ է մնացել, եւ պետք է արագացնել աշխատանքները, ամփոփել դրանք եւ ներկայացնել եզրակացություն: Այն պետք է լինի Նիկոլ Փաշինյանին պատերազմական հանցանքներից ազատելու մասին փաստաթուղթ: Ասել է թե՝ Փաշինյանն ԱԺ-ին հրահանգել է իրեն մաքրել պատերազմի եւ պարտության բոլոր մեղքերից ու մեղադրանքներից:



Վարչապետի աշխատակազմը, ի թիվս այլ հարցերի, թերանում է անգամ հասարակ մամուլի ասուլիս կազմակերպելու հարցում: Խոսենք փաստերով. երեկ վարչապետի աշխատակազմն ասուլիս էր կազմակերպել՝ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությանը նվիրված: Ի սկզբանե բանախոսների համար նախատեսված սեղանին դրված էին այն մարդկանց անունները, որոնք պետք է մասնակցեին մամուլի ասուլիսին: Ի սկզբանե դրված էին վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի, Եվրոպայի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ Անտոնիո Կոնֆլիտտի, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Կարեն Գիլոյանի եւ «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» ՀԿ նախագահ Հրաչյա Ռոստոմյանի անունները: Ասուլիսը դեռ չսկսված՝պարզվեց, որ մեկ բանախոսի անուն մոռացել են տեղադրել սեղանին, այնինչ նա շատ կարեւոր անձ է: Անգամ Կարեն Գիլոյանն առաջարկեց իր տեղը զիջել հենց այդ մարդուն, սակայն քանի որ նրա անունը չկար, որոշում կայացվեց սեղաններից հեռացնել բոլոր անունները: Խոսքը վերաբերում էր Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի նախագահ Մուհամմեդ Ջալուդին: Ուշագրավ է, որ Հրաչյա Ռոստոմյանն այդպես էլ չմասնակցեց ասուլիսին: Վարչապետի ու կառավարության աշխատակազմը մինչ այդ խառնված ինչ-որ կազմակերպչական հարցեր էր լուծում, ջուրը այստեղ կամ այնտեղ դնելու հարցը երկար քննարկում, սակայն անգամ բանախոսների անունները պատրաստել չեն կարողանում:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

# ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ՏՂԱՆԵՐԸ ԶՈՀՎԵՑԻՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը ներքաղաքական հարցերի եւ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող ԱԺ հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ զրուցել է «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության նախագահ Դավիթ Սանասարյանի հետ:**



**-Պարո՛ն Սանասարյան, Դուք հրավիրյալի կարգավիճակով մասնակցում եք պատերազմի հանգամանքները քննող ԱԺ հանձնաժողովի աշխատանքներին: Ինչպե՞ս կգնահատեք դրա արդյունավետությունը:**

-Չգիտեմ ով ինչ նպատակ ունի, բայց իմ նպատակը հստակ է, որ հասկանանք՝ ինչ է տեղի ունեցել ի վերջո. ինձ համար չկա ավելի մեծ ու կարեւոր արժեք, քան այն, ինչ տեղի է ունեցել մեզ հետ: Պետք է հասկանանք՝ ինչու մեր տղաները զոհվեցին, ինչու տարածքներ կորցրինք: Ես որեւէ ձեւ չեմ պատկերացնում, որ կլինի այնպիսի իրավիճակ, որ աջք փակեմ ինչ-որ բանի վրա: Ես այդ հանձնաժողովում եմ, որպեսզի հասկանամ՝ ինչ է կատարվել: Գաղտնիության պատճառով շատ չեմ կարող խոսել, բայց արդեն իսկ ինձ տեսանելի են շատ բաներ: Եթե ես նկատեմ, որ միտում կա շեղելու կամ «սվաղելու», այդ մասին ես ինքս հրապարակային կխոսեմ:

**-ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանի մասնակցությամբ հանձնաժողովի նիստից հետո հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը գովեստի խոսքեր հնչեցրեց նրա հասցեին: Հիշում ենք, որ Օնիկ Գասպարյանը պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանի հրաժարականն էր պահանջում: Ի՞նչ կատարվեց նիստին, ի՞նչ ասաց Օնիկ Գասպարյանը, որ իշխանությունները մտափոխվեցին ու գովեստի խոսքեր հնչեցրին նրա հասցեին:**

-Չեմ կարող ասել՝ ինչու են իշխանությունները գովեստի խոսքեր հնչեցրել Օնիկ Գասպարյանի հասցեին: Անկեղծ զրույց է եղել, երկու օր է տեւել նրա մասնակցությամբ նիստը, մոտ 5-6 ժամ ներկայացվել են մանրամասները: Անկախ նրանից, որ ժամանակին ես դատապարտել եմ նրանց հայտարարությունը, ես կարծում եմ, որ Օնիկ Գասպարյանը մեր լավագույն զինվորականներից է:

**-Վերջերս Անդրանիկ Քոչարյանը հայտարարեց, որ հանձնաժողով են հրավիրել նաեւ ԶՈՒ ԳՇ նախկին պետ Մովսես Հակոբյանին, ԶՈՒ ԳՇ պետի նախկին պետի տեղակալ Տիրան Խաչատրյանին, սակայն վերջիններս հրաժարվել են գալ: Մեզ հետ զրույցում թե՛ Հակոբյանը, թե՛ Խաչատրյանը հերքել են, թե իրենց հրավեր է ուղարկվել. Դուք ի՞նչ տեղեկություններ ունեք:**

-Ես տեղեկություն ունեմ, որ հրավերը եղել է: Երբ գալիս ես հանձնաժողով ու ներկայացնում ես այն, ինչից տեղյակ ես, ինչ որոշումների մասնակցել ես, այդ ամենը փիդենծյալագրվում է: Ինձ թվում է՝ Օնիկ Գասպարյանի օրինակին պետք է հետեւեն եւ շահագրգռված լինեն, որպեսզի խոսեն այդ մասին: Ինձ համար զարմանալի է նաեւ, որ խորհրդարանում ներկայացված մյուս ուժերը չեն մասնակցում հանձնաժողովի աշխատանքներին, քանի որ նրանք ավելի շահագրգռված պետք է լինեին, որպեսզի հասկանային՝ ինչ է կատարվում:

**-Իրենք ասում են, որ այս իշխանությունը չի կարող արդար քննություն իրականացնել, քանի որ հենց նրանց օրոք է պատերազմում պարտություն եղել:**

-Հասկացանք. թող իրենք գան, մասնակցեն, հենց կտեսնեն, որ արդար չէ քննությունը, դրա մասին թող բարձրաձայնեն: Ինչո՞ւ են թողնում փաստերը հիմնական: Խմբակցությունները պետք է մասնակցեն, հարցեր տան:

**-Պարո՛ն Սանասարյան, փորձե՞լ եք պատերազմից հետո հանդիպել Նիկոլ Փաշինյանի հետ՝ իրավիճակը հասկանալու համար, ի՞նչ հարաբերություններ ունեք նրա հետ:**

-Ես առանձին փորձ չեմ արել հանդիպելու, արտախորհրդարանական ուժերի հետ ֆորմատով է եղել հանդիպումը, ես ներկայացրել եմ ինձ մտահոգող հարցերը, տեսակետներ եմ հնչեցրել դրանց վերաբերյալ: Հարաբերությունները զուտ գործնական են, հանդիպումներից դուրս որեւէ հարաբերություններ չկա:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒԽԵՂՅԱՆԸ*

ԴԱՏԱՐԱՆԸ ՏՎԵԼ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դատարանը ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանին կրկին Հայաստանից մեկնելու թույլտվություն է տվել: Մեզ հայտնի դարձավ, որ դատարանը թույլատրել է ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Գուրգենի Խաչատրյանին 2023թ. ապրիլի 12-ից 17-ը ներառյալ մեկնել Հայաստանի Հանրապետությունից՝ համապատասխան բժշկական օգնություն ստանալու համար: Հիշեցնենք, որ ՀՀ պետեկամուտների կոմիտեի նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի վերջին նիստը չէր կայացել. դատավորը բացել է նիստը եւ փակել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Խաչատրյանի առողջական վիճակը վատ է. դա է պատճառը, որ դատարան չի ներկայացել: Ինչպես հայտնի է, հունվարի 18-ին Գագիկ Խաչատրյանին դատարանը թույլատրել էր մեկնել արտերկիր բուժման նպատակով: Նա 2023 թվականի հունվարի 20-ից մինչեւ փետրվարի 10-ը բացակայել էր երկրից, եւ չնայած մեղադրող դատախազը դեմ էր՝ մտավախություն հայտնելով, որ Խաչատրյանը Հայաստան չի վերադառնա, այնուամենայնիվ, Խաչատրյանը գնաց եւ հետ եկավ: Ինչպես հայտնի է, Գագիկ Խաչատրյանին մեղադրանք է առաջադրված միլիոնավոր դոլարների յուրացման, կաշառք վերցնելու եւ փողերի լվացման համար: Խոսքը 41 միլիոն դոլարի մասին է: Գլխավոր դատախազությունը Խաչատրյանին մեղադրում է նաեւ ապօրինի ճանապարհով հարստանալու համար: Գագիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված 20-ից ավելի անձանցից բռնագանձման ենթակա է 210 անշարժ գույք, որից 60-ը՝ Երեւան քաղաքում: Բացի այդ, դատախազությունը պահանջում է բռնագանձել 14 տրանսպորտային միջոց, մասնակցություն իրավաբանական անձ հանդիսացող 33 կազմակերպությունում, նաեւ ավելի քան 40 միլիարդ դրամ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

# ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԵՏ

**«Իմ գործընկերոջ՝ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանի հետ ապրիլի 12-ին հյուրընկալեցինք Եվրոպայի խորհրդի երեւանյան գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր տնօրինության մարդու իրավունքների, արդարադատության եւ իրավական համագործակցության ստանդարտների սահմանման վարչության ղեկավար Նիկոլա-Դանիելե Կանջեմիին եւ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների եւ կենսաբժշկության բաժնի ղեկավար Լորանս Լվոֆֆին»,- հայտնում է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:**




«Անդրադարձ կատարեցինք Ադրբեջանի կողմից Արցախի լիակատար շրջափակման հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին, արցախահայության առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրներին՝ այս համատեքստում կենսական անհրաժեշտություն համարելով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը:

Ընդգծեցինք Եվրոպայի խորհրդի ու ՀՀ խորհրդարանի համատեղ աշխատանքի կարեւորությունն ու մեր երկրում կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների եւ էթիկական սկզբունքների եվրոպական ստանդարտների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը՝ հայտնելով մեր պատրաստակամությունը՝ համագործակցելու նշված ոլորտներում:

Ի թիվս այլ հարցերի՝ խոսեցինք Հայաստանի ներքաղաքական խնդիրներից եւ համապատասխան հանձնաժողովի խայտառակ նիստում Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունից:

***Հ.Գ. Շնորհակալություն տիկին Շմիդտին հետաքրքիր նվերի՝ Տիգրան Սարգսյանի «Չմտածող կանայք» գրքի համար»,- եզրափակել է մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:***

## ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կառավարության այսօրվա նիստում որոշում կայացվեց 33,5 մլն դրամ հատկացնել 2022 թվականի սեպտեմբերի 13-ից Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետեւանքով վիրավորում ստացած կամ հոգեկան առողջության խնդիր ձեռք բերած՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն չունեցող զինծառայողներին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ, ըստ նախագծի, նրանցից յուրաքանչյուրին միանվագ կտրվի 500 հազարական դրամ:

Նախագծի ընդունման դեպքում, ըստ նախնական կանխատեսման եւ նախարարությունում առկա տեղեկատվության, միջոցառման շրջանակներում սոցիալական աջակցությունը պետք է տրամադրվի 67 զինծառայողի (67 x 500.000=33.500.000 դրամ):

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Կառավարությունն իր երեկվա՝ ապրիլի 13-ի նիստում որոշեց անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք հանձնել Երկրապահ կամավորականների միությանը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ԵԿՄ-ն դիմել է ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե: Նրանք խնդրում են Արմավիր քաղաքի Զիվանու փողոց 6 հասցեում գտնվող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով կազմակերպությանը հանձնել վերջինիս Արմավիրի տարածքային կառույցի բնականոն աշխատանքների իրականացման նպատակով: Նշենք, որ տվյալ անշարժ գույքը 159.6 քմ մակերեսով վարչական շենք է, 13.9 քմ մակերեսով շինություն եւ դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.02062 հա մակերեսով հողամաս, որը որոշվել է 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը:

## ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԿԱԶՄՈՒՄ

ՀՀ ԱԺ պատվիրակությունը ապրիլի 23-28-ը կգործուղվի Ստրասբուրգ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նստաշրջանի երկրորդ մասի աշխատանքներին մասնակցելու համար: ԱԺ պատվիրակության կազմում կլինեն ԵԽԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արմեն Գեւորգյանը (ապրիլի 23-29-ը), Արմեն Ռուստամյանը, «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Սոնա Ղազարյանը, Արուսյակ Ջուլհակյանը, Հռիփսիմե Գրիգորյանը: Պատվիրակության գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ՆԻՍՏ

# ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

**Երեկ տեղի է ունեցել ՀՀ կառավարության հերթական նիստը: Մինչ օրակարգի քննարկումը վարչապետ Փաշինյանն անդրադարձել է ապրիլի 11-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացված հերթական սադրանքին, որի հետեւանքով զոհվել են հայկական զինուժի 4 զինծառայողներ, Տեղ գյուղի հատվածում ստեղծված իրավիճակին, վերահաստատել հարաբերությունները բանակցություններով կարգավորելու հայկական կողմի պատրաստակամությունը:**



Իր խոսքում Նիկոլ Փաշինյանը, մասնավորապես, նշել է. «Ի հեճուկս մեր կողմից գործադրված բոլոր ջանքերի՝ ցավոք, չհաջողվեց Հայաստան-Ադրբեջան սահմանի Տեղ գյուղի հատվածում սահմանապահների ընթացող տեղակայումն իրագործել առանց սրացումների:

Ապրիլի 11-ին ադրբեջանական զինված ուժերն այդ հատվածում հերթական սադրանքն իրագործեց, որի հետեւանքով մեր Զինված ուժերի 4 զինծառայողներ զոհվեցին՝ անձնվիրաբար կատարելով իրենց զինվորական պարտքը եւ պաշտպանելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքը»:

Նա առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել զոհվածների հիշատակը, ապա շարունակեց. «Դեպքի մանրամասներին այս պահին չեմ անդրադառնում, որովհետեւ կարծում եմ, հրապարակված տեսանյութը պատկերացում տալիս է տեղի ունեցածի մասին:

Ինչ վերաբերում է Տեղ գյուղի հատվածում մարտի 30-ից ստեղծված իրավիճակին, կարծում եմ՝ իրադրությունը մանրամասն քննության կարիք ունի, այդ թվում՝ գնահատելու մեր գործողությունները պետական սահմանի խնդրո առարկա հատվածը ի սկզբանե պահպանության առնելու գործողությունների առումով:

Միեւնույն ժամանակ պիտի արձանագրեմ, որ նշված տեղամասում Ադրբեջանի գործողությունները սադրիչ են եւ հակասում են 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում եւ 2022 թվականի հոկտեմբերի 31-ին Սոչիում կայացած հանդիպումների արդյունքներով ընդունված հայտարարություններին:

Սահմանային իրավիճակի քաղաքական գնահատականի առումով, կարծում եմ, կարեւոր է նախորդ օրը Եվրամիության կողմից տարածված հաղորդագրությունը, որտեղ ընդգծվում է 1991 թվականի սահմանագիծը: Խոսքը Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ միջեւ գոյություն ունեցած վարչական սահմանագծի մասին է, որը 1991 թվականի դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում հռչակագրով վերածվել է պետական սահմանի», - նշեց նա:

Նրա խոսքով՝ սահմանագիծը պետք է հարգվի, եւ դա արձանագրվել է Եվրամիության արձանագրության մեջ: «Դրանում ընդգծվում է այդ սահմանագծից երկու կողմերի զինված ուժերի ետ քաշումը ապահով հեռավորության վրա՝ որպես իրադրության կայունության հուսալի երաշխիք: Հարկ եմ համարում ընդգծել, որ Հայաստանը պատրաստ է գնալ նման միջոցի՝ Հայաստան-Ադրբեջան 1991 թվականի սահմանային գծի ողջ երկայնքով: Մենք այս մասով մեր պատրաստակամությունը հայտնում ենք 2021 թվականից, եւ նման գործողությունը բխում է վերը հիշատակված Պրահայի քառակողմ եւ Սոչիի եռակողմ պայմանավորվածությունների տրամաբանությունից:

Նման լուծմանը խոչընդոտում է Ադրբեջանի ապակառուցողական մոտեցումը: Ադրբեջանը սիստեմատիկ կերպով ի ցույց է դնում միջազգային հարթակներում ձեռք բերված պայմանավորվածությունները չկատարելու իր գործելակերպը: Այդպես է գերիների ազատ արձակման հարցում: Այդպես է հրադադարի ռեժիմի պահպանման եւ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման հարցում, որի շուրջ գրավոր համաձայնությունը ձեռք է բերվել 2022 թվականի հոկտեմբերի 31-ին Սոչիում: Այդպես է Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հարցում, որն Ադրբեջանի կողմից շարունակվում է՝ ի հեճուկս նաեւ միջազգային դատական բարձրագույն ատյանի՝ Արդարադատության միջազգային դատարանի՝ փետրվարի 22-ին կայացրած որոշման: Բայց դատարանի որոշումը չկատարելու պարագայում կան նախանշված միջազգային մեխանիզմներ, եւ մեր ջանքերը պետք է կենտրոնանան այդ ջանքերի գործարկման վրա:

Միեւնուն ժամանակ, ի հեճուկս բոլոր դժվարությունների՝ մենք շարունակում ենք հավատարիմ մնալ տարածաշրջանային բոլոր հարցերը՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը եւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները բանակցություններով կարգավորելու քաղաքականությանը:

Մենք պատրաստ ենք նաեւ տարածաշրջանային տնտեսական եւ տրանսպորտային կապերի վերաբացմանը՝ նախկինում մեր բարձրաձայնած սկզբունքների հիման վրա:

Պատրաստ ենք նաեւ սահմանների դելիմիտացիային Պրահայի եւ Սոչիի վերը հիշատակված պայմանավորվածությունների հիման վրա», - հավելել է նա:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԱՅՑ՝ ԷՐԵԲՈՒՆԻ ԱՄՐՈՑ

Լիոնի քաղաքապետ Գրեգորի Դուսեի գլխավորած պատվիրակությունն այցելել է Էրեբունի ամրոց: Պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանի ուղեկցությամբ Գրեգորի Դուսեն շրջել է ամրոցի տարածքում, ծանոթացել հնավայրի պատմությանը. այս մասին հայտնեցին Երեւանի քաղաքապետարանից:

Գրենոբլի հողի ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի հետ էլ այս տարի Կարմիր բլուրում կընթանան աղյուսի արտադրամասի ստեղծման, աղյուսի արտադրության եւ հուշարձանի աղյուսաշեն պատերից մեկի հատվածային ամրակայման աշխատանքներ:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Համաշխարհային բանկի խմբի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարիչների խորհուրդների 2023թ. գարնանային հանդիպումների շրջանակներում հայկական պատվիրակության ներկայացուցիչները ապրիլի 12-ին հանդիպումներ են ունեցել ԱՄՀ հայաստանյան առաքելության ղեկավար Իվա Պետրովայի, ԱՄՀ Մերձավոր Արեւելքի ու Կենտրոնական Ասիայի վարչության տնօրեն Ջիհադ Ազուրի եւ ԱՄՀ գործադիր խորհրդում Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Փոլ Հիլբերսի հետ:

Հայկական պատվիրակության անդամները հանդիպում են ունեցել «Մուդիզ» (Moody's) միջազգային վարկանիշային գործակալության ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի մակրոտնտեսական ներկա իրավիճակն ու տնտեսական վերջին զարգացումները:

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՇԱՀԱՎԵՏ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երեւանի եւ Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթ երկրամասի միջեւ գործարար կապերի զարգացման, համատեղ նախագծերի իրականացման հնարավորություններն են քննարկել Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պաշտոնակատար Լեւոն Հովհաննիսյանը եւ Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի նախագահ Գյուննար Շելլենբերգերի գլխավորած պատվիրակությունը:

Խոսելով քաղաքային տնտեսության զարգացման ծրագրերի մասին՝ Լեւոն Հովհաննիսյանը նշել է, որ հաշվի առնելով հայ-գերմանական հարաբերությունների ներկա բարձր մակարդակը՝ քաղաքապետարանը բաց ու պատրաստակամ է դիտարկել ներդրումային փոխշահավետ առաջարկները:

Գյուննար Շելլենբերգերն ընդգծել է իրենց գործարարների հետաքրքրվածությունը տարբեր բնագավառներում գործակցության հաստատմամբ: Առաջարկներ են հնչել կրթության, առողջապահության ոլորտներում նոր նախագծերի եւ փորձի փոխանակման ծրագրերի վերաբերյալ:

Անդրադառնալով Երեւանի եւ Սաքսոնիա երկրամասի Լայպցիգ քաղաքի միջեւ դեռեւս 2021թ. բարեկամական հարաբերություններ հաստատելու մասին մտադրությունների հուշագրին՝ գերմանական կողմը հույս է հայտնել, որ այն կարող է վերաճել ծրագրային հստակ գործակցության եւ հրավիրել Երեւանի գործընկերներին Գերմանիա:

ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՍԿԱԾՆԵՐ

# ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՍԱՀՄԱՆ ՀԱՏԱԾ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆ

**SHAMSHYAN.com-ը երեկ հայտնել է, nr աmrիլի 12-ին hrազենի գnrծադrմամբ սղանություն է տեղի ունեցել Սյունիfի մarզում: Ժամը 18:30-ի սահմաններում «Կաղան» բժcկական կենsrnնից ահազանգ է ստացվել ՀՀ ներfին գnrծերի նախարarnւթյան nuտիկանության Կաղանի բաժին եւ հայտնել են, nr cստաղօգնության բժիcկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Կաղան խnշnrացված համայնfի Շղarշիկ Բանավանի տաrածfում գտնվող «Զանգեզուrի պղնձամnլիբդենային կոմբինատ»-ի խողովակաշarի պահպանման պահակակետ, nrտեղ հայտնաբերել են տղամarդու դի:**



ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգը վարկած ունի. կասկածները տանում են այն ուղղություն, որ վերոնշյալ քաղաքացուն սպանել է ադրբեջանցի այն զինվորականը, որը ապրիլի 10-ին եւս մեկ զինվորականի հետ հատել էր ՀՀ սահմանը եւ մտել Սիսիանի գյուղերից մեկը: Նրանցից մեկին իրավապահները բռնել են եւ կալանավորել:

Ինչպես ավելի վաղ հայտնել է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Վարդան Մկրտչյանը, ոստիկանության Կապանի բաժնի պետ Արա Դավթյանը, Սյունիքի մարզի դատախազ Պողոսյանը եւ Հայաստանի քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Մարգարյանը: Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածը Սյունիքի մարզի բնակիչ, նշված գործարանում որպես պահնորդ աշխատող 57-ամյա Հայրապետ Մելիքսեթյանն է:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ դիակի զննությամբ մարմնի վրա հայտնաբերվել է հրազենային 6 վնասվածք, այդ թվում՝ գլխի եւ որովայնի հատվածում:

Ավելի ուշ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ իրավապահները ձերբակալել են ՀՀ սահմանը հատած երկրորդ ադրբեջանցի զինծառայողին, որը «լայվ» էր մտել Սյունիքից եւ հայտարարություններ արել հայերին կոտորելու մասին: Այսպիսով, մեզ մանրամասներ են հայտնի դարձել, թե ինչպես է հայտնաբերվել ադրբեջանցի զինծառայողը. նրան հայտնաբերել են Կապանի թռչնաֆաբրիկայի տարածքից: Շերենց գյուղի տարեց ամուսինները նկատել են տարօրինակ արտաքինով տղամարդու եւ բնակիչներով հավաքվել, շրջափակել են նրան եւ շտապ ահազանգել իրավապահներին ու Արտակարգ իրավիճակների նախարարությանը:

Դեպքի վայր հասած իրավապահները արձանագրել են, որ բնակիչների կողմից բռնված տղամարդը ադրբեջանցի երկրորդ զինծառայողն է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հմայակ Ալեքսանյանին, Հասմիկ Ավալյանին, Կարինե Կարապետյանին, Թերեզա Գալստյանին, Գոհար Գալստյանին մեղադրանք է առաջադրվել, որ նրանք, հանդիսանալով «Սեւանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում որպես իմունիզացիայի բուժքույր եւ կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) դեմ քաղաքացիներին պատվաստումներ կատարող պատասխանատու անձ, 2021թ. հուլիսի 20-ին եւ նույն թվականի սեպտեմբերի 19-ին Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ Տագհավի Նամին Ալիի ու Ամարամ Մասումենի՝ Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու պայմաններում կազմել է նրանց իբրեւ հետազոտելու եւ պատվաստման ենթակա լինելու վերաբերյալ բժշկական փաստաթղթերը՝ դրանցում կատարելով ակնհայտ կեղծ գրառումներ:

Այնուհետեւ Գ. Գալստյանը 2021թ. հուլիսի 20-ին վերոնշյալ անձանց պատվաստված չլինելու պայմաններում կազմել եւ հաստատել է կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) դեմ նրանց պատվաստված լինելը հավաստող կեղծ փաստաթղթեր՝ սերտիֆիկատներ, որոնք մուտքագրել է էլեկտրոնային առողջության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ՎԱՐՈՐԴԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Ապրիլի 10-ին՝ ժամը 23:40-ի սահմաններում, Արագածոտնի մարզի պարեկները Երեւան-Գյումրի ճանապարհին ծառայություն իրականացնելիս Ագարակ գյուղի սկզբնամասում կանգնեցրել են «Օպել» մակնիշի մի մեքենա:

Այս մասին հայտնում են ոստիկանությունից:

Վարորդը չի ունեցել տեխզննման, պարտադիր ապահովագրման փաստաթղթեր, իսկ մեքենան հետախուզման մեջ էր: Ավելին՝ մայրաքաղաքի բնակիչ, 46-ամյա վարորդը ոչ սթափ վիճակում էր եւ չուներ մեքենան վարելու համապատասխան փաստաթղթեր: Վարչական արձանագրություն չկազմելու համար վարորդը, որպես կաշառք, պարեկային ծառայության աշխատակցին փորձել էր տալ հինգ հազար դրամ:

Նա ձերբակալվել եւ, ավտոմեքենայով հանդերձ, տեղափոխվել է ոստիկանության Աշտարակի բաժին:

Դեպքի առթիվ Արագածոտնի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

46-ամյա տղամարդը տեղափոխվել է բաժնի ձերբակալվածների պահման վայր: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

## ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Ոստիկանության Արաբկիրի բաժնում ահազանգը հնչեց գիշերվա ժամը 1.15-ին: Մամիկոնյանց փողոցի շենքերից մեկի բնակիչը հայտնում էր, որ շքամուտքում աղմուկ է, խնդրում էր, որ ոստիկան մոտենա:

Հնարավոր հետեւանքները կանխելու մտադրությամբ Արաբկիրի բաժնի օպերատիվ խումբը հնարավորինս արագ մեկնեց դեպքի վայր: Միջադեպը հաջողությամբ կանխվեց, շենքի գիշերային անդորրը վերականգնվեց, սակայն երբ ոստիկանները վիճողներից մեկին ուղեկցեցին տուն, հյուրասենյակի սեղանին՝ շատ տեսանելի տեղում, նկատեցին կանեփանման զանգված ու հինգ ծխամորճ:

Հետագա միջոցառումները զուգորդվեցին քննչական գործողություններով: Հայտնաբերված դեղնականաչավուն զանգվածն ավելի քան 24 գրամ էր, կար նաեւ կանեփի սերմ՝ վեց գրամից քիչ ավելի: Թմրանյութ ապօրինի պահելու եւ օգտագործելու կասկածանքով 25-ամյա տանտերը ձերբակալվեց: Նա ներկայացվել է Արաբկիրի քննչական բաժին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾԻՆ

Կառավարությունն իր երեկվա՝ ապրիլի 13-ի նիստում սահմանեց պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության ձեւը, ծավալն ու տրամադրելու կարգը, ինչպես նաեւ դատապարտյալին տրամադրվող միանվագ դրամական օգնության չափն ու տրամադրման կարգը:

Նախագծով առաջարկվում է սահմանել պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության ձեւը եւ ծավալը, մասնավորապես՝ տրամադրվող ծառայությունների տեսակները, կարգավորել սոցիալական աջակցության տրամադրման գործընթացի ընթացակարգային եւ այլ հարցեր, դատապարտյալին տրամադրվող միանվագ դրամական օգնության չափը սահմանել 100 հազար ՀՀ դրամ՝ եւս 50 հազար ՀՀ դրամով ավելացվելու հնարավորությամբ: Գումարի չափը որոշվել է իրավահամեմատական եղանակով՝ համադրելով ՀՀ կառավարության եւ Երեւան քաղաքի ավագանու որոշումներով սոցիալական աջակցության տարբեր տեսակների դեպքում տրամադրվող դրամական միջոցները: Սահմանված 100.000 ՀՀ դրամին եւս 50.000 ՀՀ դրամ ավելացնելը պայմանավորված է լինելու միայն նախագծով նշված ցուցիչներով եւ լրացուցիչ հիմնավորվելու է յուրաքանչյուր դատապարտյալի դեպքում անհատապես:

Գործող կարգավորումները նախատեսում են, որ հիմնարկի վարչակազմն ապահովում է պատժից ազատվող դատապարտյալի անվճար տեղափոխումը մինչեւ նրա բնակության վայր կամ տրամադրում է դրա համար անհրաժեշտ գումար ՀՀ տարածքում տեղափոխվելու համար՝ այդ ընթացքում ապահովելով անհրաժեշտ սննդամթերքով կամ դրա համար անհրաժեշտ գումարով, սեզոնային հագուստով:

Բացի այդ, հաշվի առնելով օրենսգրքով սահմանված չափորոշիչները՝ հիմնարկի վարչակազմի պատճառաբանված որոշման հիման վրա՝ կարող է տրամադրվել նաեւ միանվագ դրամական օգնություն, որի տրամադրման չափն ու կարգը սահմանում է Կառավարությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ՝ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻՆ

2023թ. մարտի 31-ին Բերդի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության եւ անշարժ գույքի կառավարման բաժնի պետ Վ. Գրիգորյանի եւ նույն բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Աթոյանի կողմից կազմվել է վարչական իրավախախտման արձանագրություն՝ Բերդ համայնքի Բերդ քաղաքի Մաշտոցի 26 շենքի հարակից տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ինքնակամ զավթելու եւ այդ հողամասում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ: Վարչարարության կարգով հարուցված եւ իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների քննության արդյունքում հանձնաժողովը հաստատել է, որ Բերդ քաղաքի Խորենացու փողոցի 71/18 հասցեում հաշվառված Արմենակ Սուրենի Մելքումյանը Բերդ քաղաքի վարչական տարածքում գտնվող Մաշտոցի 26 շենքի հարակից տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը զավթել եւ դրա վրա կատարել է շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, կառուցել ինքնակամ շինություն: Բերդի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023թ. ապրիլի 4-ի հրավիրվել է լսում, որին մասնակցելու համար Արմենակ Մելքումյանը պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել: Պարզվել է, որ Արմենակ Մելքումյանը վերոհիշյալ ինքնակամ կառույցի շինարարությունն իրականացրել է 1985 թվականին: Ապրիլի 11-ին Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը որոշել է Արմենակ Մելքումյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել ինքնակամ շինություն կառուցելու մասով՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ինքնակամ զավթելու եւ դրա հետեւանքները չվերացնելու համար նշանակել տուգանք՝ 200 հազար դրամի չափով: Բերդ քաղաքի բնակիչ Ռազմիկ Սմբատի Մաճկալյանը Բերդ քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ Մաշտոցի փողոցի 14 շենքի տարածքին հարակից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փատաթղթերի ու առանց շինթույլտվության, 2000 թվականին իրականացրել է ինքնակամ կառույցի շինարարություն: 2023թ. մարտի 27-ին Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը որոշել է Ռազմիկ Մաճկալյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել ինքնակամ շինություն կառուցելու մասով՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ինքնակամ զավթելու եւ դրա հետեւանքները չվերացնելու համար նշանակել տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

*ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՊ-Ի ՊԱՇՏՈՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԷ

**«Կարեւոր է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը քաղաքական չէ, վերջինիս ընտրության ու պաշտոնավարման ընթացքն էլ չեն կարող լինել այդպիսին, հետեւապես իմ ամբողջ գործունեությունն ու այդ ընթացքում իմ կողմից տարածվող խոսույթը կառուցված են լինելու՝ հենց այդ գաղափարը նկատի ունենալով»,- սոցիալական ցանցի իր էջում գրել է ՀՀ նորընտիր ՄԻՊ Անահիտ Մանասյանը:**



«Մեր հայրենիքի համար մարտահրավերներով լի այս ժամանակահատվածում մեծ պատասխանատվությամբ եմ ստանձնել Մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունը:

Ջգտելու եմ գիտելիքներիս ու հմտություններիս ամբողջ ծավալը ծառայեցնել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշպանության բնագավառի կատարելագործմանը:

Երբ մտածում էի այն մասին, թե կարող եմ արդյոք ստանձնել նշված պատասխանատվությունը, սկսեցի վերլուծել այն արժեքները, որ ինքս եմ կրում: Դրանք ինձ ուղեկցում են մանկությունից՝ ստացածս դաստիարակության շնորհիվ: Ես երբեւէ չեմ դավաճանել այդ սկզբունքներին, այն է՝ բարություն, կարեկցանք մարդկանց ու նրանց ճակատագրերի նկատմամբ, մարդասիրություն, արժանապատվություն, արդարություն, ազնվություն եւ գիտելիքի հանդեպ անսահման հավատ:

Կարեւոր է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը քաղաքական չէ, վերջինիս ընտրության ու պաշտոնավարման ընթացքն էլ չեն կարող լինել այդպիսին, հետեւապես իմ ամբողջ գործունեությունն ու այդ ընթացքում իմ կողմից տարածվող խոսույթը կառուցված են լինելու՝հենց այդ գաղափարը նկատի ունենալով:

Ջգտելու եմ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը դարձնել հարթակ հանրային հանդուրժողականության եւ համերաշխության հասնելու ճանապարհին՝անմասն պահելով վերջինս հնարավոր բոլոր քաղաքական շահարկումներից:

Իմ առաջնահերթ նպատակն է հանրային հանդուրժողականության մթնոլորտում ձեւավորել մարդու արժանապատվության եւ իրավունքների նկատմամբ հարգանքի միջավայր՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման սկզբունքի կարեւորությունը նկատի ունենալով:

Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում իմ կողմից օգտագործելի միակ գործիքակազմը չեմ համարում քննադատական հայտարարություններ անելը: Բացառիկ կարեւորություն եմ տալու հանրության եւ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց միջեւ հաշտարարության, ինչպես նաեւ կրթության միջոցով մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ մթնոլորտ ձեւավորելու կառուցակարգերին:

Համոզված եմ, որ այս բարդ փուլում բոլորիս առաջահերթ նպատակը պետք է լինի մեր ունեցած խնդիրներին ազնվորեն նայելն ու դրանց համար համատեղ ուժերով լուծումներ գտնելը փոխադարձ հարգանքի եւ համագործակցության մթնոլորտում:

Վստահ եմ, որ բռնությունը վերջնարդյունքի տեսանկյունից որեւէ արդյունքի չի հանգեցնում: Միեւնույն ժամանակ համոզված եմ, որ հաղթել հնարավոր է՝ միայն արժանապատվությունը պահպանելով: Եվ այս համատեքստում կարեւորում եմ, որպեսզի մեզանից յուրաքանչյուրն անհատապես, ինչպես նաեւ մենք՝ որպես հավաքական հանրություն, անենք ամեն ինչ մեր արժանապատվությունը պահպանելու համար:

Այսքանը՝ խոսքով, մնացյալը կփորձեմ ցույց տալ իմ աշխատանքով:

Շնորհակալ եմ»,- գրել է նա:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# ՊԵՆՏԱԳՈՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ Է ԿԻՐԱՌԵԼ

**Պենտագոնը սահմանափակել է համացանց արտահոսած գերատեսչության փաստաթղթերի եւ գաղտնի տեղեկատվության հասանելիությունը ապագայում Միացյալ Նահանգների ազգային անվտանգությունը եւ նրա դաշնակիցներին պաշտպանելու համար. ասել է Սպիտակ տան մամուլի քարտուղար Կարին Ժան Պիերը:**



«Պենտագոնը հայտարարել է, որ քայլեր է ձեռնարկել գաղտնի տեղեկատվության հասանելիությունը հետագայում սահմանափակելու համար: Մենք քննարկում ենք ազգային անվտանգության համար դժվարությունները, կարող եմ ավելացնել, նվազեցնելու համար այդ փաստաթղթերի հրապարակման ազդեցությունը Միացյալ Նահանգների ազգային անվտանգության, ինչպես նաեւ մեր դաշնակիցների ու գործընկերների վրա: Մենք շատ լուրջ ենք վերաբերվում այս հարցին: Հետաքննությունը շարունակվում է, Պաշտպանության նախարարությունը միջոցներ է ձեռնարկել այդ փաստաթղթերը սահմանափակելու համար»,- մամուլի ասուլիսի ժամանակ ասել է Ժան Պիերը:

Պենտագոնը հետաքննում է սոցցանցում ուկրաինական զորքերի վիճակը նկարագրող նյութերի արտահոսքը եւ դրանք ուժեղացնելու ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի ծրագրերը: The New York Times-ը նշել է, որ փաստաթղթերը, իբր, տարածվում են «Telegram-ի ռուսական կառավարամետ ալիքներով»: Ենթադրվում է, որ ավելի քան 100 փաստաթուղթ կարող է հայտնվել համացանցում. կատարվածի վնասը զգալի է:

Սպիտակ տունը հրաժարվել է հաստատել համացանցում հրապարակված նյութերի իսկությունը եւ ասել, որ դեռ պատրաստ չէ խոսել այն մասին, թե ինչպես եւ ինչու է կազմակերպվել արտահոսքը: Արդարադատության նախարարությունը դեպքի առթիվ քրեական հետաքննություն է վարում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԼՈՒՐԵՐ

### 8 ՏԱՐԻ ԱՆՑ

Արեւմտյան Հայաստանում՝ միակ գործող եկեղեցում՝ Սուրբ Կիրակոսում, ապրիլի 9-ին տեղի է ունեցել Սուրբ Հարության տոնին նվիրված պատարագ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցում Սուրբ Հարության տոնի պատարագը մատուցել են Պոլսո Հայոց պատրիարքարանից ժամանած հոգեւորականները:

Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին մեծ վնասներ էր կրել 2015 թվականին թուրք-քրդական բախումների հետեւանքով եւ երկար ժամանակ փակ էր վերանորոգման նպատակով:

### ԿՆԵՐԱՌԵՆ ՌԵԵՍՏՐՈՒՄ

Կառավարությունը որոշեց, որ «ԲԵՍԹ ԲԱՅ ԱՐՄ» փակ բաժնետիրական ընկերությունը կներառվի «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում: Որոշման մեջ նշվում է, որ, ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում ստեղծվել է «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտին, որի մեկնարկը տրվել է 2019 թվականի հունվարին: 2018 թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության (ներկայիս՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության) եւ «ԷԿՈՍ» ՓԲԸ միջեւ կնքվել է վերոնշյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպման մասին պայմանագիրը, ինչը հնարավորություն է տալիս շահագործել վերոնշյալ ազատ տնտեսական գոտին: ««ԲԵՍԹ ԲԱՅ ԱՐՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հանձնաժողովին է ներկայացվել «ԷԿՈՍ» ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու համար համապատասխան հայտ: «Էկոս» ազատ տնտեսական գոտում շահագործողների գործունեությունը հնարավորություն կընձեռի ներգրավել ներդրումներ, խթանել բարձր եւ նորարարական տեխնոլոգիաների ոլորտում ստեղծված արդյունքի արտահանումը, նպաստել տվյալ հատվածում հայկական բրենդի ճանաչմանն ու տարածմանը:

### 11 ՄԼՐԴ ԴՐԱՄ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կառավարությունն ապրիլի 13-ի նիստում 11 մլրդ 184 մլն դրամ հատկացրեց 14 ճանապարհահատվածի եւ 1 տրանսպորտային օբյեկտի շինարարության համար: ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանն ասաց. «Ընդհանուր առմամբ, բոլորի հանրագումարը 63,2 կմ է, որից միջպետականը 13,3 կմ է, հանրապետականը՝ 36,5 կմ, եւ մարզային նշանակության ճանապարհները՝ 12,2 կմ»:

Գնել Սանոսյանն ավելացրեց, որ չզեկուցվող հարցերից մեկով էլ նախատեսված է Ազատանից դեպի Գյումրի ճանապարհի համար հատկացնել 1 մլրդ 260 մլն դրամ: Ավանդույթի համաձայն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթով թվարկեց, թե որ ճանապարհների մասին է խոսքը:

«Տրամադրված ենք այս տարի եւս 500 կմ ավտոճանապարհ նորոգելու պլանին. այսօր արդեն տեսնում ենք, որ դա իրագործելի, իրատեսական ծրագիր է»,-ասաց վարչապետը:

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

# ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՄԱՄՈԳՐԱՖԻԿ ԱՆՎՃԱՐ ՍՔՐԻՆԻՆԳ

**Կառավարությունն իր ապրիլի 13-ի նիստում հաստատեց Հայաստանի եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման կատարելագործում» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրին կից թիվ 3 լրացուցիչ համաձայնագիրը:**



Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ծրագիրն ուղղված է ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ինչպես նաեւ կառավարման գործընթացի բարելավմանն առաջնային բուժօգնության կազմակերպմանը:

1 մլն ԱՄՆ դոլարի տրամադրման վերաբերյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր սահմանամերձ ՀՀ Տավուշի, Սյունիքի եւ Լոռու մարզերում իրականացնել կրծքագեղձի մամոգրաֆիկ անվճար սքրինինգային հետազոտություններ:

Ծրագիրը մեկնարկվել է 2021 թվականի հունվարի 19-ից ՀՀ Լոռու մարզում, այնուհետ շարժական մամոգրաֆը տեղակայվել է ՀՀ Տավուշի մարզում, իսկ ներկայում ծրագիրը շարունակվում է ՀՀ Սյունիքի մարզում:

Իրականացված հետազոտությունների արդյունքները փաստում են դրամաշնորհային ծրագրի բարձր արդյունավետության եւ սոցիալական նշանակության մասին: Մեկնարկից ի վեր՝ մինչ 2023թ.-ի փետրվարի 28-ը, իրականացվել է 18 652 մամոգրաֆիկ հետազոտություն, որից 5209-ը՝ Տավուշի մարզում, 3333-ը՝ Լոռու մարզում:

Ախտորոշումը հստակեցնելու նպատակով 1361 կին ուղեգրվել է լրացուցիչ հետազոտություններ: Ծրագրի մասնակիցների համար լրացուցիչ հետազոտությունները նույնպես իրականացվում են անվճար՝ Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի աջակցությամբ:

Ուղեգրված 1361 կնոջից 867-ն անցել են լրացուցիչ հետազոտություններ (մյուսները չեն այցելել), 205 կնոջ մոտ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշումը հաստատվել է, եւ 198 հիվանդի տրամադրվել է անվճար մասնագիտացված բուժօգնություն:

Հաշվի առնելով ծրագրի արդյունավետությունը կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման տեսակետից եւ ՀՀ 3 մարզերում իրականացված հետազոտությունների արդյունքում տնտեսված գումարը՝ առաջարկվել է դրամաշնորհային ծրագրում ներառել նաեւ ՀՀ Շիրակի մարզը:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն նախորդ հրապարակային ծանուցումների՝ տեղեկացնում ենք, որ «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) «Բիէսթի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ- ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող ստորեւ նշված լոտերի աճուրդային փուլերը շարունակվելու են 18.04.2022թ.-ին ժ.12:00-ին հոլանդական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝29.12.2023թ.

- ք. Երեւան, Կենտրոն, Ե. Կողբացու փողոց, 2/2 հասցեում գտնվող 272,7 ք.մ. ջերմային հանգույց եւ 0,0356 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝155000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Վիլնյուսի փողոց, 13/6 շենք, 30 հասցեում գտնվող 307,24 ք.մ. տարածք եւ 0,072336 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝64000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Արզնի, 2-րդ զանգված, 20-րդ թաղամաս, 16/1 հասցեում գտնվող 345,3 ք.մ. այգետնակ, 23,4 ք.մ. ջրավազան եւ 0,0525 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝15200000 ՀՀ դրամ:
- ք.Երեւան, Նոր-Նորք, Ջրվեժ, Մայակ թաղամաս, 77/23 հասցեում գտնվող 0,030679 հա հողամաս: Մեկնարկային գինը՝14700000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ջրվեժ, Մայակ թաղամաս, 77/24 հասցեում գտնվող 0,028089 հա հողամաս (174,2 ք.մ. շինության մասով գրանցման օբյեկտը կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի իրավունքներն են) : Մեկնարկային գինը՝13500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ջրվեժ, Մայակ թաղամաս, 77/25 հասցեում գտնվող 11,28 ք.մ. բնակելի տարածք եւ 0,040274 հա հողամաս: Մեկնարկային գինը՝19300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/26 հասցեում գտնվող 0,037645 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 18000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/30 հասցեում գտնվող 0,011993 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/42 հասցեում գտնվող 0,011994 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/43 հասցեում գտնվող 0,011993 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/44 հասցեում գտնվող 0,011992 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/45 հասցեում գտնվող 0,011994 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/46 հասցեում գտնվող 0,011997 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 77/47 հասցեում գտնվող 0,011999 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 7200000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ախուրյանի խճուղի, 13 հասցեում գտնվող 0,03 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝8900000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, Գավառ ք., Միքայելյան փողոց, 29 հասցեում գտնվող 446,6 ք.մ. վարչական շենք, 155,6 ք.մ. ավտոտնակ, 125,4 ք.մ. պահեստ, 169,2 ք.մ. ավտոտնակ, 164 ք.մ. ծածկ, 69,8 ք.մ. /105,4 խ.մ./ պարիսպ եւ 0,655 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 65000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Հրազդանի կիրճ, 81 հասցեում գտնվող 32,6 ք.մ. հասարակական շինություն, 29,1 ք.մ.ծածկ, աստիճանահարթակ, 17,2 ք.մ. /56,8 խ.մ./ պարիսպ եւ 0,047629 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 47800000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, Սիսիան ք., Լալայան փողոց, 2 հասցեում գտնվող 136 ք.մ. կաթսայատուն, 252 ք.մ. պահեստներ, 58,8 ք.մ. պահակատուն, 30 ք.մ. ենթակայան, 504 ք.մ. փայտամշակման արտադրամաս, 504 ք.մ. մետաղամշակման արտադրամաս, 1700,1 ք.մ. կարի արտադրամաս, 288 ք.մ. ճաշարան եւ 1,38 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝92000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն, գյուղ Քարաշամբ, 2-րդ փողոց, 31 հասցեում գտնվող 346,4 ք.մ. բնակելի տուն եւ 0.18 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նորք, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 25 հասցեում գտնվող 329,1 ք.մ. բնակելի տուն, 82,2 ք.մ. ավտոտնակ եւ 0.0576 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 113400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Մուրացանի փողոց, 31 հասցեում գտնվող 231.6 ք.մ. բնակելի տուն եւ 0.022936 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝37000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Աբովյան փողոց, 26ա շենք, 63 հասցեում գտնվող 102.9 ք.մ. խանութ: Լոտի մեկնարկային գինը՝50000000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Մայրաքաղաքային փողոց, 128 հասցեում գտնվող 792.1 ք.մ. բնակելի տուն, 8.6 ք.մ. պահեստ, 45.5 ք.մ. լողավազան, 24.5 ք.մ. առանձնասենյակ, 68.6 ք.մ. ծածկ, 73.7 ք.մ. ծածկ եւ 0.0955 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 200000000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Մայակովսկի փողոց, 125 հասցեում գտնվող 58.09 ք.մ. բնակելի տուն, 7.83 ք.մ. օժանդակ շինություն եւ 0.00975 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝5100000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ջիվանու փողոց, 21 հասցեում գտնվող 30.86 ք.մ. բնակելի տուն, 88.39 ք.մ. բնակելի տուն, 20.66 ք.մ. ավտոտնակ, 1.06 ք.մ. զուգարան, 0.84 ք.մ. /1.68 խ.մ./ պարիսպ, 0.01837 հա, 0.0003 հա եւ ք. Գյումրի, Ջիվանու փողոց, 5-րդ նրբանցք, 2 հասցեի հետ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.008516 հա հողամասում գտնվող 0.004258 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝14100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Բուդապեշտի փողոց, 26 հասցեում գտնվող 93.4 ք.մ. բնակելի տուն, 74.4 ք.մ. ինքնակամ մակերես եւ 0.04336 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝49900000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Նոր Կյուրին, 29-րդ փողոց, 25 հասցեում գտնվող 27.2 ք.մ. կիսանկուղ, 28.7 ք.մ. կիսակառույց եւ 0.118 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 5100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Բարբյուսի փողոց, 10/12 հասցեում գտնվող 141.7 ք.մ. բնակելի տուն, 3.4 ք.մ. /7.48 խ.մ., 17 գծմ/ պարիսպ եւ 0.020345 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝60000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Հաղթանակի 1-ին փողոց, 55 հասցեում գտնվող 1245.3 ք.մ. անասնաշենք, 1203.2 ք.մ. անասնաշենք, 1921.3 ք.մ. անասնաշենք, 11.8 ք.մ. ենթակայան, 1816.2 ք.մ. ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ եւ 4.95 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 520000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Զորաղբյուր, 5-րդ փողոց, 28 հասցեում գտնվող 0.12 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝12000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Զորաղբյուր, 7-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 0.12 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝12000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Առինջ Ավանի դաշտ, 3-րդ փողոց, թիվ 41, 43, 43/1, 45/1 հասցեում գտնվող 404.21 ք.մ. բնակելի տուն, 34.3 ք.մ. տնտեսական շինություն, 48.7 ք.մ. ջրավազան, 21.6 ք.մ. խորդանոց, 43.2 ք.մ. ավտոտնակ, 117 ք.մ. ծածկ, 71.3 ք.մ. ծածկ եւ 0.3334 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝345000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Թեյշեբանի փողոց, 10 հասցեում գտնվող 107.7 ք.մ. կշեռք, 22.2 ք.մ. հանգստի սենյակ, 2559.2 ք.մ. արտադրամաս, 30 ք.մ. ենթակայան, 32.6 ք.մ. պահակատուն, 2 ք.մ. սանհանգույց, 216 ք.մ. ծածկ եւ 1.405 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 440000000 ՀՀ դրամ:

Հրապարակային ծանուցումների մյուս դրույթները մնում են անփոփոխ:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

# ՏՐԵՏՅԱԿՈՎՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ԿԲԱՑՎԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

**ՀՀ ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանն ապրիլի 12-ին ընդունել է Մոսկվայի պետական Տրետյակովյան պատկերասրահի ներկայացուցիչներին՝ պատկերասրահի գիտական գծով փոխտնօրեն Տատյանա Կարպովայի գլխավորությամբ: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը, Ռուսական արվեստի թանգարանի տնօրեն Մարինե Մկրտչյանը, Տրետյակովյան պատկերասրահի ներկայացուցիչներ:**



Ռուսական պատվիրակությունը Հայաստան է ժամանել՝ քննարկելու Տրետյակովյան պատկերասրահում Ռուսական արվեստի թանգարանի հիմնադիր, պրոֆեսոր, բժիշկ, ԽՍՀՄ աշխատանքային հերոս, Մոսկվայի պատվավոր քաղաքացի Արամ Աբրահամյանի 125-ամյակին նվիրված ցուցահանդեսի կազմակերպմանը վերաբերող հարցեր: Նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, ողջունելով հյուրերին, կարեւորել է Տրետյակովյան պատկերասրահի հետ հայկական կողմի համագործակցությունը: «Վստահ եմ՝ կհաջողեք այս նախաձեռնության իրականացման հարցում, եւ ձեր համագործակցությունն այսքանով չի սահմանափակվի:

Կառավարությունը պատրաստ է աջակցել դրա շարունակականության ապահովմանը: Թանգարանները, մեր պատկերացմամբ, այժմ ավելի շատ պետք է զբաղվեն նաեւ գիտական եւ հետազոտական գործունեությամբ՝ վերածվելով, այսպես կոչված, ինստիտուտների: Կարեւորում ենք նաեւ թանգարանների փոխգործակցությունը միջազգային գործընկերների հետ: Այս համատեքստում Ռուսական արվեստի թանգարանը բավականին ակտիվ գործունեություն է ծավալում, ինչը շատ գնահատելի է»,- ընդգծել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Ռուսական արվեստի թանգարանի հիմնադիր Արամ Աբրահամյանի 125-ամյակին նվիրված ցուցահանդեսը Մոսկվայի պետական Տրետյակովյան պատկերասրահում նախատեսվում է անցկացնել 2024 թվականի մարտին: Պատկերասրահի ներկայացուցիչները կարեւորել են անհատական հավաքածուների վրա հիմնված թանգարանների ստեղծումը, ինչպիսին Ռուսական արվեստի թանգարանն է Երեւանում: Կողմերի ընդգծմամբ՝ Արամ Աբրահամյանի աշխատանքներն իսկապես յուրահատուկ են եւ հետաքրքիր կլինեն թանգարանի այցելուների համար: Ռուսական արվեստի թանգարանի տնօրեն Մարինե Մկրտչյանի գնահատմամբ՝ Տրետյակովյան պատկերասրահում ցուցահանդես իրականացնելը մեծ պատիվ է: Նա նաեւ տեղեկացրել է, որ վաղվանից թանգարանն անցնելու է կոսմետիկ վերանորոգման փուլ եւ կվերաբացվի մայիսի 20-ին: Հանդիպմանը քննարկվել են նաեւ աշխատանքային մի շարք հարցեր:

*Լ.Ե.*

7-12 ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Ռուսական գրքի տունը Երեւանում» «Լիվըր» ընկերության հետ համատեղ մեկնարկել է գեղարվեստական թարգմանության մրցույթ՝ նվիրված բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ եւ թարգմանիչ Վալերի Բրյուսովի ծննդյան 150-ամյակին: Մրցույթն անցկացվում է Հայաստանի 7-12 դասարանների բոլոր այն աշակերտների համար, որոնք սիրում են ռուսերենը եւ ցանկանում են փորձել իրենց ուժերը:

Որպես մրցույթի թեմաներ՝ ընտրվել են Վիլյամ Սարոյանի «Ծիծաղ», «Առաջին օրը դպրոցում», «Գյուղացին» եւ Անտոն Չեխովի «Երջանկություն», «Ուսուցիչ», «Գրիշա» պատմվածքները:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով: 1-ին փուլին մասնակցելու համար անհրաժեշտ է կարդալ առաջարկված 3 տարբերակներից մեկում ներառված երկու հեղինակների ստեղծագործությունները, թարգմանել հայերենից ռուսերեն եւ ռուսերենից հայերեն նշված հատվածները եւ լրացված հայտի հետ մինչեւ ապրիլի 30-ն ուղարկել մրցույթի էլեկտրոնային հասցեին՝ konkurs.perevoda@gmail.com:

Մրցույթի 1-ին փուլի արդյունքներով կընտրվեն 22 լավագույն աշխատանքներ ՀՀ յուրաքանչյուր մարզից եւ Երեւանից: 1-ին փուլի հաղթողները կանցնեն 2-րդ փուլ եւ կստանան 100000 դրամ մրցանակ: 1-ին փուլի այն հաղթողները, որոնք չեն մասնակցի 2-րդ փուլին, մրցանակ չեն ստանա:

Մրցույթի 2-ին փուլին մասնակցելու համար 1-ին փուլի հաղթողները պետք է նկարեն կարճ տեսահոլովակ (մինչեւ 5 րոպե տեւողությամբ), որում կպատմեն, թե ինչպես են արել թարգմանությունը եւ ինչ աղբյուրներից են օգտվել, ինչպես նաեւ գրեն կարճ պատմվածք (մեկ A4 թերթ)՝ «Ընտրված ստեղծագործության հերոսը՝ 2123 թվականին» թեմայով: 2-րդ փուլի հաղթողը կստանա 1000000 դրամ մրցանակ կամ կրթաթոշակ Հայաստանի եւ Ռուսաստանի ցանկացած բուհում սովորելու: Հաղթողի ուսումնական հաստատությունը կստանա նաեւ հատուկ մրցանակ (առաջին անհրաժեշտության խնդրի լուծում):

Մրցույթի նպատակն է ազգային գրականության եւ գրողների հանրահռչակումը, գրական ստեղծագործական արվեստի խթանումը, լեզվաբանության եւ բանասիրության բնագավառում տաղանդավոր եւ շնորհալի աշակերտների բացահայտումը, գրավոր թարգմանության ոլորտում դպրոցականների ստեղծագործական կարողությունների եւ դրանց գործնական հմտությունների զարգացումը, միջմշակութային հաղորդակցության խթանումը:

Մրցույթն անցկացվում է ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ՄՇԱԿՈՒՅԹ

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԼՄԱՐԻ 75-ԱՄՅԱԿԻՆ

**ՀՀ ժողովրդական նկարիչ Վլադիմիր Մարգարյանը (Վալմար) նշում է ծննդյան 75-ամյակը:**

ՀՀ ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ ապրիլի 21-30-ը Հայաստանի նկարիչների միությունում տեղի կունենա նկարչի ծննդյան 75-ամյա հոբելյանին նվիրված հեղինակային աշխատանքների ցուցահանդես:

Վալմարը սերտորեն համագործակցում է տարբեր երկրներում գտնվող պատկերասրահների հետ: Նկարչի ստեղծագործական գործունեության ընթացքում կազմակերպվել է 50-ից ավելի անհատական եւ 133 խմբային ցուցահանդեսներ Հայաստանում, Ռուսաստանում, Մերձբալթյան երկրներում, Եվրոպայում, Միջին Արեւելքի, ԱՄՆ եւ Կանադայի մի շարք քաղաքների մշակութային կենտրոններում եւ պատկերասրահներում: Տարբեր տարիներին կատարվել են գրքերի եւ թատերական ներկայացումների ձեւավորումներ:




● *Ապրիլի 15-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Վերջին ուսուցիչը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ԿՐԹԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր իրավունք ունեն օգտվել ուսման վարձի զեղչից նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:**

*Հայարփի Մանուկյան (43 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ ուսումնական հաստատությունը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչեւ տասը տոկոսին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը եւ բարձր առաջադիմության արդյունքները, իր միջոցների հաշվին մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին,
2) միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին,
3) 3 եւ ավելի անչափահաս կամ 3 եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
4) վճարովի ուսուցման համակարգում երկու եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,
6) հեռավոր լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներին,
7) մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
8) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ:

*ՀՀ կրթության, գիտության,*
*մշակույթի եւ սպորտի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Փոխատեղման արդյունքում անվճար համակարգում ընդգրկված, սակայն նախորդ ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն չցուցաբերած ուսանողներն ընդգրկվում են վճարովի համակարգ, իսկ վճարովի համակարգի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները՝ անվճար ուսուցման համակարգ՝ բացառությամբ մինչեւ 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով ընդունված կամ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողների:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե քանի օրինակից է կնքվում ստորագրությունների իսկության ճանաչմամբ կնքվող պայմանագիրը:**

*Տիգրան Հակոբյան (54 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեղեկացնում ենք, որ ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը ստորագրվում եւ ընդունվում է պետական գրանցման մեկ օրինակից, որը համարվում է այդ պայմանագրի բնօրինակը եւ պահպանվում է տվյալ անշարժ գույքի միավորի համար կազմված կադաստրային գործում: Պայմանագրի կողմի դիմումի հիման վրա՝ նրան տրամադրվում է պետական գրանցման ընդունված պայմանագրի պատճենը՝ հաստատված Կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակի կնիքով: Նման կարգով տրամադրված պատճենը եւ անշարժ գույքի ռեգիստրում պահպանվող պայմանագրի բնօրինակն ունեն հավասար իրավաբանական ուժ:

*Կադաստրի կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակներում անշարժ գույքի գործարքները կարող են կնքվել՝ միայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագրերի հիման վրա:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Գյումրիում*



Երեկ՝ ապրիլի 13-ին, Գյումրի քաղաքում կարծես առաջին ձյունն էր գալիս՝ հաշվի չառնելով, որ արդեն գարնան 2-րդ ամիսն է:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | | |
|---|---|---|---|
| Շիրակ | 0 + 4<br>+ 4 + 8 | Արարատ | + 9 + 11<br>+12 + 12 |
| Կոտայքի լեռներ | - 3 + 1<br>+ 3 + 6 | Արմավիր | + 5 + 8<br>+13 + 16 |
| Կոտայքի նախալեռներ | + 2 + 5<br>+ 9 +11 | Վայոց ձորի լեռներ | + 5 + 7<br>+13 + 16 |
| Գեղարքունիք | - 2 + 2<br>+ 4 + 6 | Վայոց ձորի նախալեռներ | 0 - 3<br>+ 2 + 5 |
| Լոռի | 0 + 4<br>+11 + 14 | Սյունիքի հովիտներ | + 6 + 9<br>+14 + 18 |
| Տավուշ | + 3 + 6<br>+13 + 16 | Սյունիքի նախալեռներ | + 1 + 5<br>+10 + 13 |
| Արագածոտնի լեռներ | 0 - 3<br>+ 2 + 4 | Արցախ | + 7 + 11<br>+12 + 16 |
| Արագածոտնի նախալեռներ | + 3 + 6<br>+ 8 + 12 | Երեւան | + 4 + 6<br>+12 + 14 |

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*